# Diocese of the Armenian Church of North America

630 Second Avenue, New York 16, N.Y. ★ MUrray Hill 6-0710

**Archbishop Sion Manoogian**
Primate

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ
ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ
Առաջնորդ


Թիւ 4022
Փետրուար 16, 1962

Հոգեշնորհ
Տ. Վարուժան Վրդ. Գաբառաճեան
Այցելու Հովիւ եւ Նախագահ Ծխական Խորհուրդի
Ս. Մեսրոպ Եկեղեցւոյ
Ռէյսին.

Սիրելի Հայր Սուրբ,

Ստացած ենք Ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ 1962, Յունուար 21ին գումարուած Համայնքիդ Ծխական Ժողովը կատարած է Ծխական Խորհուրդի մասնակի ընտրութիւն, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը, կը խնդրէք ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը։

Նկատի ունենալով որ Ձեր Ծխական Ժողովը տեղի ունեցած է Թեմական Կանոնագրութեան տրամադրութեանց համաձայն, եւ ընտրուած անձերը, իբրեւ եկեղեցւոյդ նախանձախնդիր ու նուիրեալ անդամներ, կը վայելեն Ձեր Համայնքի ժողովուրդին վստահութիւնը, այսու կը վաւերացնենք անոնց ընտրութիւնը, ըստ հետեւեալին.

Տիարք՝ Հարրի Ջըքինեան
Հարրի Մսըրլեան
Մայք Գալուստեան

Կը յանձնարարենք որ առաջին առիթով Առաջնորդարան ղրկէք Ձեր Ծխական Խորհուրդի նոր դիւանի կազմի եւ Նորընտիր Թեմական Պատգամաւորներու անուն-հասցէները։

Օրհնելով Ծխական Խորհուրդիդ նոր կազմը, կը մաղթենք Ձեզի եւ պատուարժան անդամներուն յաջող ու արդիւնաւոր գործունէութիւն, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի շինութիւն Համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին։

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ
Աղօթարար

ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի